

Ապարանի բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոն



Public Environmental Information Center of Aparan

ԾՅՅՅ. ԾԾ, 3103, ն.ՁձՅՅՅՅ, ՊՈՆՅՅՅՅՅ 26
ՏՅՅ.ՅՅՅՅՅ +/ 0252/ 6 53 62
ՅՅՅ.ՅՅՅՅ aarhusaparan@mail.ru



Adress Bagramian 26, Aparan, 3103, RA
Tel./Fax +/ 252/ 6 53 62
E-mail aarhusaparan@mail.ru

ԱՊԱՐԱՆԻ ՕՐՀՈՒՍ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԿ 2011Թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ /հունվար-դեկտեմբեր/

Հաշվետու ժամանակահատվածում Ապարանի Օրհուս կենտրոնում կազմակերպվել ու իրականացվել են նախատեսված, ինչպես նաև աշխատանքային պլանում նախատես տեղ չգտած հետևյալ աշխատանքները.

1. Կենտրոնի գործունեության ամփոփ նկարագիրը

Հաշվետու ժամանակաշրջանում (2011թ) կենտրոնի նախաձեռնությամբ և աջակցությամբ անցկացվել են ավելի քան չորս տասնյակ միջոցառումներ՝ սեմինարներ, դասընթացներ, հանդիպումներ, էքսկուրսիաներ, ցուցահանդես, ծառատունկ, սանիտարական մաքրման աշխատանքներ և այլն, կազմակերպվել են հանդիպումներ հիմնարկությունների, ուսումնական հաստատությունների, ՏԻՄ-երի ներկայացուցիչների, երիտասարդների հետ: Հանդիպումների ընթացքում ձեռք է բերվել բնապահպանական միջոցառումների համատեղ անցկացման պայմանավորվածություն:

Կենտրոնում անցկացված միջոցառումները հիմնականում ուղղված են եղել Օրհուսի կոնվենցիայի տեղեկատվության մատչելիությունը դրույթի իրականացմանը նպաստելուն, ինչպես նաև էկոլոգիական կրթության և էկոլոգիական մտածելակերպի ձևավորմանը:

Օրհուսի կոնվենցիայի՝ հասարակության որոշումներ կայացնելու դրույթի ուղղությամբ կենտրոնում անցկացվել է հանրային քննարկում՝ Նիզավան գյուղի տարածքում գտնվող Ապարանի աղբավայրի վերակառուցման անհրաժեշտության վերաբերյալ: Հանրային քննարկմանը մասնակիցները կարևորեցին այդ միջոցառումը, որովհետև այն հնարավորություն տվեց հասարակայնությանը բարձրացնել և քննարկել համայնքի կարևոր բնապահպանական խնդիրները:

Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնը համագործակցել է տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների, հասարակայնության ներկայացուցիչների հետ, տրամադրել է տեղեկատվություն, տեսաֆիլմեր: Կենտրոնում պատրաստվում են Power Point ծրագրով ուսուցողական համակարգչային նյութեր, որոնցից մի քանիսը տրամադրվել են համայնքի դպրոցներին, թեմային համապատասխան դասերին օգտագործելու նպատակով: Կենտրոնի հոդվածները տպագրվել են մարզային մամուլում, հայտարարություններ են տրվել տեղական հեռուստատեսությամբ, տպագրվել և տարածվել են լրատվական թերթիկներ:

Կենտրոնի տարածքը տրամադրվել է այլ կազմակերպությունների միջոցառումներ անցկացնելու համար (Ապարանի երիտասարդական կազմակերպություն, ուսանողական խորուրդ, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա ՀԿ, ՀՀԿ Ապարանի կանանց խորհուրդ և այլն), Կենտրոնում ստեղծվել է տեղեկատվական բազա համայնքի բնակչության պայմանների, բնապահպանական հիմնախնդիրների և դրանց լուծման վերաբերյալ առաջարկվող միջոցառումների մասին:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի միջոցառումների մասնակիցների ընդհանուր թիվը 865 է, որը կազմում է Ապարանի բնակչության 13%-ը: Ավելացել է կենտրոնի գործունեությանը մասին տեղեկացված համայնքի բնակիչների թիվը: Կենտրոնի ծառայություններից օգտվել է 230 մարդ, որը կազմում է քաղաքի բնակչության 4%-ը: Կենտրոնի այցելուների ընդհանուր թիվը ընթացիկ տարում կազմել է 1095:


Աղյուսակ I կենտրոնի միջոցառումների ընդհանուր քանակը, տեսակներն ըստ ամսաթվերի Ընդամենը՝ 47

ամիս	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	
Այցելություններ և աշխատանք. հանդիպումներ	17.01.11. 18.01.11. 29.01.11.		03.03.11.				24.06.11	20.07.11			20.10. 11	15.11.11
Կյոք սեղան-քննարկումներ		27.02.11.		07.04.11	27.05.11.	06.06.11. 09.06.11.			15.09.11 16.09.11 26.09.11 26.09.11			
Հասարակական քննարկումներ						13.06.11.						
Մեմինարներ դասընթացներ	21.01.11.	19.02.11.	17.03.11.	01.04.11. 14.04.11.	18.05.11.	07.06.11.	28.07.11		19.09.11	01.10.11. 04.10.11.	15.11.11 16.11.11 29.11.11.	
Ցուցահանդեսներ, մրցույթներ					20.05.11.							
Դպրոցական. հանդեսներ				13.04.11.								
Հողվածներ Մամուլում										1	1	
Շնորհանդեսներ			17.03.11.	11.04.11.								
Էքսկուրսիաներ										01.10.11.		
Գործնական աշխ. Շաբաթօրյակն.				11.04.11.	17.05.11. 21.05.11.							
Ծառատունկ				30.04.11.								
Փորձագետների Խորհրդի նիստեր		16.02.11.										
Տարածքի տրամադրում		01.02.11. 02.02.11. 03.02.11. 04.02.11.						23.07.11	11.08.11 21.08.11	23.09.11		
Մասնակցություն այլ կազմակերպ. միջոցառումներին					31.05.11.	07.06.11 14.06.11.						
Ընդամենը՝ 47 Միջոցառում	5	7	3	7	6	7	3		7	5	4	

Աղյուսակ II

Կենտրոնի միջոցառումների քանակն և տեսակներն ըստ ուղղվածության;

Ընդամենը՝ 47




Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից (գրադարան, ֆիլմոդարան, պատճենահանում, ինտերնետ, խորհրդատվություն) օգտվել են ևս 230 այցելու:



Աղյուսակ III 2011 թ. Ընթացքում կենտրոնի ծառայություններից օգտվել են 230 քաղաքացի							
month	գրադարան	ֆիլմոդարան	ինտերնետ	Պատճենահան	Խորհրդատվություն	Տարածքի տրամադրում	Ընդամենը ծառայություն
Հունվար	3 այցելու		4	4		10	
փետրվար	3	2	4	5		10	
Մարտ	3	3	4	4	4	10	
Ապրիլ	3	4	6	7		10	
Մայիս	5	5	6	8	4		
Հունիս	2	2		10			
Հուլիս	3	2		5		8	
Օգոստոս	2	3		4		17	
Սեպտեմբեր	4	4		3	1	10	
Հոկտեմբեր	1	2		10			
նոյեմբեր	1			5			
Ընդամենը`	30	27	24	65	9	75	230

Կենտրոնի միջոցառումների մասնակիցների տոկոսային բաժինը ըստ տարիքային խմբերի, բնագավառների, ոլորտների


Աղյուսակ IV- ից երևում է, որ կենտրոնի այցելուների և միջոցառումների մասնակիցների մեծամասնությունը կազմում են պատանիները և աշակերտները` 44. %: Հասարակայնության ներկայացուցիչները կազմում են համայնքի բնակչության 29.%, երիտասարդներն ու ուսանողները` 13. %: Հասարակության մյուս խմբերի տոկոսային բաժինը 8%- ից ցածր է:



-4-Աղյուսակ V



Աղյուսակ V – ում երևում է, որ 2010թ-ի նույն ժամանակահատվածի հետ համեմատ, 2011թ-ին ավելացել է կենտրոնի թե, միջոցառումների, թե, մասնակիցների թիվը: 2010թ-ին կենտրոնի այցելուների թիվը եղել է 830, իսկ կենտրոնի ծառայություն. օգտվողների. թիվը՝ 106: 2010թ-ին Ընդհանուր թիվը՝ 936: 2011թ-ին՝ 1095:



Կենտրոնի այցելուների ընդհանուր թիվը 2011 թ – ին կազմել է 1095 :

2. Տարժման նյութեր, հոդվածներ, լրատվական թերթիկներ

- Կենտրոնում անցկացված սեմինարների վերաբերյալ հոդվածները ուղարկվել են www.aarhus.am կայքին
- Նյութեր են տեղադրվել [facebook](https://www.facebook.com)
- Մշտապես նյութեր են տեղադրվել www.aparan.am կայքում
- Նյութեր են տրամադրվել Էկոլուր-ին
- << Վտանգավոր ժառանգություն-թունաքիմիկատներ >> վերնագրով հոդված է ուղարկվել մարզային << Գյուղխորհրդատվություն >> թերթին (տպագրվել է)
- << Հրդեհները ալյալան մարզագետիներում >> վերնագրով հոդված է ուղարկվել մարզային << Գյուղխորհրդատվություն >> թերթին (տպագրվել է)
- Պատրաստվել են և տարածվել աղբի այրման, ժամկետանց թունաքիմիկատների վտանգավորության, օգոնային շերտի, ալյալան մարզագետիներին պահպանության , օրգանական գյուղատնտեսության առավելությունների վերաբերյալ և այլ լրատվական թերթիկներ:
- Կենտրոնի գրադարանը և տեսադարանը հարստացվել են տեղեկատվական նոր գրքույկներով և տեսասկավառակներով:
- Շնորհակալագրեր են հանձնվել կենտրոնի միջոցառումներին լավագույն մասնակցության համար:

3. կենտրոնի կողմից իրականացված հանդիպումները

- Կենտրոնի աշխատակիցները հանդիպում են ունեցել Ապարանի քաղաքապետի, փոխքաղաքապետի հետ, ներկայացվել են Ապարանի Օրհուս կենտրոնի գործունեությունն ու կատարած աշխատանքները, ներկայացվել են համայնքի բնապահպանական խնդիրները:
- Կենտրոնի աշխատակիցները հանդիպում են ունեցել Ապարանի անտառտնտեսության տնօրենի և աշխատակիցների հետ:
- Համակարգողը հանդիպում է ունեցելի միջհամայնքային միավորման նախագահի հետ
- Կենտրոնում անցկացվող միջոցառումների վերաբերյալ նախնական պայմանավորվածություն ձևափակելու նպատակով համակարգողը հանդիպումներ է ունեցել դպրոցների, հիմնարկությունների, ՏԻՄ-երի ներկայացուցիչների, հասարակական կազմակերպության անդամների ու աշխատակիցների, համայնքապետերի, ավագանու անդամների հետ:
- Արագածոտնի ԳԱՄԿ-ի աշխատակիցների հետ
- ՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

4. Կենտրոնի աշխատանքների հավաստիացման աղբյուրներ

- Տարեկան աշխատանքային պլան
- Հոդվածներ, թերթեր, լրատվական թերթիկներ, սեմինարների վերաբերյալ նյութեր
- Միջոցառումների, սեմինար քննարկումների արձանագրություններ
- Լուսանկարներ
- Շնորհակալագրեր
- Պատրաստվել է << Էներգախնայողություն, Մթնոլորտի պահպանություն >>, Մեր բնաշխարհի թռչունները >> և << Բնակչության վարքի կանոնները երկրաշարժի ժամանակ>>, << Բնական աղետներ>> համակարգչային չորս շնորհանդես (power point presentation):
- Կենտրոնի միջոցառումների մասնակիցների ցուցակներ:
- Ուսուցանվող թեմաներին վերաբերող նյութեր:
- Ֆինանսական ծախսերը հաստատող ապրանքագրեր, կտրոններ:
- Էլեկտրոնային կայքեր

5. Համագործակցություն

- ՏԻՄ-եր
- ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ
- << Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա >> ՀԿ
- ՀՀԿ Ապարանի կանանց խորհուրդ
- Օրհուս կենտրոններ
- Բուհ-երի , քոլեջի, դպրոցների, արվեստի դպրոցի սովորողներ, ղեկավարություն
- ՋԼՄ-ներ (Գյուղխորհրդատվության թերթ, տեղական հեռուստաալիք):
- Զբոսաշրջության, սանկայիդեմ ծառայություն, անտառտնտեսություն:
- Տապան էկոակումբ-Ապարանի SPAR խմբակ
- Հայաստանի Թոշունների պահպանման միության Եվրոթոշնադիտարկում 2011— ին
- Հայ կանայք հանուն առողջության ՀԿ
- Կենտրոնի տարածքը տրամադրվել է սեմինարներ, քննարկումներ անցկացնելու նպատակով
- (Ապարանի երիտասարդական խորհուրդ, << Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա >> ՀԿ, և այլն:

6. Ձեռքբերումները

- Ձևավորվել է համագործակցություն կենտրոնի և ՏԻՄ-երի, ՀԿ-ների և այլ կազմակերպությունների միջև
- Կենտրոնում իրականացվում է տեղեկատվության հավաքագրում և տրամադրում

(էլեկտրոնային փոստ, հայտարարություններ, էլեկտրոնային կայքեր, հանդիպումներ, թերթերում հոդվածներ)

- Կենտրոնը աշխատում է տարածաշրջանի բնապահպանական և առողջապահական խնդիրների բացահայտման և վերհանման ուղղությամբ:
- Կենտրոնում ՏԻՄ-երի և հասարակության ներկայացուցիչները համատեղ քննարկում են համայնքի շրջակա միջավայրին վերաբերող հարցեր, շրջակա միջավայրի առավել հրատապ հիմնախնդիրներ:
- Ձևավորվել է համագործակցություն ՏԻՄ-երի և կենտրոնի միջև այդ խնդիրների համատեղ լուծման ուղղությամբ /օր` ալպյան մարգագետիններում հրդեհների դեմ պայքարի, քաղաքի կենտրոնում ճահճացող տարածքի վերացման քաղաքային զբոսայգու վերականգնման ուղղությամբ, /
- Կենտրոնի գործունեության արդյունքում բարձրացել է տարածաշրջանի հասարակության իրազեկվածության մակարդակը:
- Կենտրոնի աշխատանքներում ներգրավվել են 4 կամավոր , որոնք մասնակցում են կենտրոնի միջոցառումներին , ցուցաբերում աջակցություն:
- Մշտապես հարստացվում է կենտրոնի գրադարանը և տեսադարանը նոր նյութերով, տեխնիկական սարքերով:
- Կենտրոնի օգնությամբ հասարակությունը իրազեկվում է իր իրավունքների, պարտականությունների և այլ օրենսդրական ակտերի և որոշումների վերաբերյալ /Բնապահպանական սակագներ և տուգանքներ /
- Տեղական ինքնակառավարման մարմինները հաշվի են առնում կենտրոնում, քննարկումների արդյունքում ձևավորված առաջարկությունները, կարծիքը:
- Ավելացել է կենտրոն այցելողների և տեղեկատվություն ստացողների թիվը:

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող`
Նատալիա Մանուկյան
հեռ. բջջ. /374 94/ 22-49-26
հեռ. /374 252/ 6-23-60
Info_aparan@aarhus.am
E-mail:aarhusaparan@mail.ru